ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**05.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/4>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

<<30>> 08 2019թ.

ք. Չարենցավան

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շաhիգալդյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<Գրանտշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Կապալառու>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 05.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/4>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, <<Գրանտշին>> ՍՊԸ-ի կողմից 28.08.2019թ.-ին ներկայացրած թիվ 2778/04 գրությունը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 28.08.2019թ.-ին ներկայացրած թիվ 2779/04 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Կողմերը որոշեցին՝

1.1 05.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/4>> գնման պայմանագրի գինը ավելացնել 290000 (երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ ընդհանուր պայմանագրի գինը կկազմի 6266000 (վեց միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

1.2 05.06.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/4>> գնման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 15-ը:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| <<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>> | <<ԿԱՊԱԼԱՌՈՒ>> |
|---|---|
| Չարենցավան համայնք | <<Գրանտշին>> ՍՊԸ |
| ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | Լոռու մարզ, Վահագնաձոր 1փ. տուն 97 |
| ՀՀ ՖՆ ԳՎ | <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900132132011 | Հ/Հ 1930065816000100 |
| ՀՎՀՀ 03022497 | ՀՎՀՀ 06953951 |
| | Էլ. փոստ՝ grantshin777@gmail.com |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| Հ. Կ. Շահիգալդյան | Գ. Հարությունյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |